



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻՖԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ПАЛАТА АУДИТОРОВ И ЭКСПЕРТ БУХГАЛТЕРОВ
АРМЕНИИ CHAMBER OF AUDITORS AND EXPERT
ACCOUNTANTS OF ARMENIA

ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/3, 6-րդ հարկ,

Հեռ.: 010 24-91-78; 077 24-91-78; 010 23-71-02; E-mail: info@caaa.am

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Շրջաբերական նամակ

«Սույն շրջաբերականը կրում է միայն խորհրդատավական բնույթ և չի կարող դիտարկվել որպես պաշտոնական պարզաբանում»:

Անուն և պաշտոն.	
Կազմակերպություն.	Աուդիտ Սթար ՍՊԸ
Կոնտակտային տվյալներ.	Էլ. փոստ auditstar@gmail.com
Ամսաթիվ.	02.09.2025
Հարցում.	Հարգելի գործընկերներ, 1. Շահաբաժինը համաձայն ՀՀ Հարկային Օրենսգրքի համարվում է պասիվ եկամուտ և Հարկային Օրենսգրքի 150 հոդվածի 14 կետի համաձայն նախատեսվում է սահմանված ժամկետում չվճարման դեպքում եկամտային հարկի 20 տոկոս դրույքաչափ: Օրենսգիրքը չի պարզաբանում նմանատիպ հանգամանքները, երբ ընկերությունը շահաբաժինը չի վճարում բաժնետիրոջ որոշակի պարտականություններ կամ անհրաժեշտ գործողություններ չկատարելու դեպքում, մասնավորապես վերը նշված հանգամանքներում, որի արդյունքում անհնար է դառնում շահաբաժնի վճարումը: Արդյոք սա կարելի է համարել որպես հոդվածի «պասիվ եկամուտների, դրանց ստացման իրավունքը ձեռք բերելու» խոչընդոտ և չառաջնորդվել այս հոդվածի պահանջներով և այս բաժնետերերի շահաբաժինների վճարումը իրականացնել տվյալ բաժնետիրոջ կամ ժառանգի կողմից ռեեստրի հաշիվը ակտիվացնելու և ընկերությանը սահմանված տեղեկատվությունները տրամադրելուց հետո: 2. Եթե հարկային գործակալը կիրառում է սույն հոդվածը և եկամտային հարկը հաշվարկում է 20 տոկոս դրույքաչափով, սա արդյո՞ք նշանակում է, որ

	հետագայում հարկային գործակալը իր բաժնետիրոջ շահաբաժինը պետք է վճարի հարկը հանելուց հետո մնացած 80 տոկոսը, թե սովորական պայմաններում շահաբաժինների վճարման համար նախատեսվող 5 տոկոս դրույքաչափի և 150-րդ հոդվածի 14-րդ կետի կիրառության արդյունքում առաջացող 15 տոկոս տարբերությունը վճարվում է հարկային գործակալի հաշվին՝ բաժնետիրոջը վճարելով 95 տոկոսը: 3. Նույնիսկ 20 տոկոս հարկը վճարելուց հետո հարցը չի կարգավորվում և բաց է մնում այն հարցը, որ եթե բաժնետերը այնուամենայնիվ չի գալիս գումարը ստանալու, ապա այն ընկերությունը պե՞տք է արդյոք որոշ ժամանակ հետո ձևակերպի որպես եկամուտ: Տվյալ դեպքում այն պետք է հարկվի ևս մեկ անգամ շահութահարկով թե՞ ոչ, նկատի ունենալով, որ այն հանդիսանում է զուտ շահույթ և արդեն 2 անգամ հարկվել է: Խնդրում ենք նաև պարզաբանել արդյո՞ք շահաբաժինը համարվում է կրեդիտորական պարտք և ունի արդյոք հայցային վաղեմություն: Բոլոր դեպքերում էլ առաջանում են հարցեր, որովհետև մի դեպքում հարկային գործակալ ընկերությունը չի համաձայնվում իր միջոցների հաշվին վճարել տարբերության գումարը 15 տոկոսի չափով, մյուս դեպքում հնարավոր է բաժնետերը չհամաձայնվի 5 տոկոսի հարկի փոխարեն իրենց պահեն ևս 15 տոկոս: Խնդրում ենք նաև հաշվի առնել այն փաստը, որ 15 տոկոս ընկերության կողմից և իր հաշվին վճարելու պարագայում հնարավոր է, որ ընկերությունը այդքան զուտ շահույթ պարզապես չունենա:
--	--

Հանձնաժողովի արձագանքը

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՕ-ով բացառություններ նախատեսված չեն հետևաբար 20% -ի դրույթը կիրառելի է,
- Համաձայն ՀՕ-ի 4-րդ հոդվածի 68-րդ կետի շահաբաժինները համարվում են կրեդիտորական պարտք: